ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ
2014 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան…….. 4

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի

ներդրումային ծրագրի կառուցվածքը……5

ԲԱԺԻՆ 2.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի

ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և

ներդրումների ձևավորման աղբյուրները……8

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……8

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները ……10

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի

ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……12

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ……12

3.2 Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում……14

3.2.1 Նոր սպառողների միացմանն ուղղված ներդրումներ…… 14

3.2.2 Հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ ……14

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման

ուղղությամբ կատարված ներդրումներ……14

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման

համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ ……15

ԲԱԺԻՆ 4.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից

իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները ……17

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ ……17

4.2 Աշխատանքների և ծառայությունների

շուկայական գների մոնիթորինգ ……18

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……21

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը ……21

5.2 Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը……25

5.3 Լուծարված և օտարված հիմնական միջոցներից նվազեցումներ……25

5.4 Այլ անձանց միջոցներով ստեղծված հիմնական միջոցների արժեքներից նվազեցումներ……26

5.5 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……27

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ……29

Հղումներ օգտագործված նյութերին ……33

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի դեկտեմբերի 8-ի №452Լ որոշումով հաստատված 2015 թվականի աշխատանքային ծրագրի 27-րդ կետի և արտացոլում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2014-2018 թվականների ներդրումային ծրագրի 2014 թվականի հատվածի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրի և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2014-2018 թվականների Ներդրումային ծրագիրը [Որոշում 1, Գրություն 1] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվություններն ու տեղեկատվությունները [Հաշվետվություն 1], [Տեղեկատվություն 1, 2, 3, 4, 5]:

Հաշվի է առնվել նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2016 թվականի փետրվարի 17-ի №04-ԿՀ-05/471 գրությամբ ներկայացված մեկնաբանություններն ու առաջարկությունները:

ԲԱԺԻՆ 1.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, էլեկտրամատակարարման հուսալիության և անվտանգության աստիճանի պատշաճ մակարդակի պահպանման նպատակով: Ներդրումներ են նախատեսվել նաև նոր սպառողների միացման և հեռանկարային սպառման պահանջարկի բավարարման նպատակով բաշխիչ ցանցերի ընդլայնման ուղղությամբ: Բացի վերը նշվածը բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով նախատեսվել են ներդրումներ գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման, արտադրական և վարչական շենքերի ու շինությունների վերակառուցման, ինչպես նաև ընկերության տեխնիկական անձնակազմի համար ուսումնական վարժադաշտի կառուցման ուղղությամբ: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 8 936,5[1] մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 69,4%-ը, նախատեսված էր նոր սպառողների միացման և բաշխիչ ցանցերի ընդլայնման նպատակով հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ, (շուրջ 32,4%-ը նախատեսված էր ներդնել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու ուղղությամբ, իսկ 37,0%-ը՝ Երևան, Ծաղկաձոր և Դիլիջան քաղաքներում հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ):

Ներդրումների հաջորդ հիմնական հատվածը՝ շուրջ 20,7%-ը, նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը՝ մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանն ու վերազինմանը, բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավմանը, այլ անձանց

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

պատկանող ենթակայանների ձեռքբերմանը, ինչպես նաև Երևան քաղաքում և մարզերում թվով 16 հատուկ հասցեական աշխատանքների իրականացմանը:



Առևտրային հաշվառման համակարգի բարելավմանն ուղղությամբ, որին բաժին է ընկնում ընդհանուր ծրագրի 2,5%-ը, նախատեսված էր փոխարինել կամ տեղակայել նոր հաշվիչներ՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էր նաև շարունակել էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքները:

Ներդրումային ծրագրի՝ բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներով, որոնք կազմում են 654,9 մլն դրամ կամ ընդհանուր ներդրումների 7,3%-ը, նախատեսված էին հետևյալ միջոցառումները.

գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 39,8 մլն դրամ,

համակարգչային և սերվերային տեխնիկայի և համալրող սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև ERP համակարգի ներդրում՝ 416,0 մլն դրամ,

վարչական շենքերի և շինությունների վերակառուցում 20,0 մլն դրամ,

շահագործման մեջ չգտնվող տրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում՝ 49,1 մլն դրամ,

ուսումնական վարժադաշտի կառուցում 110,0 մլն դրամ,

դիզելային գեներատորի ձեռք բերում և տեղակայում ընկերության գլխավոր մասնաշենքում 20 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 2.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները և ներդրումների ձևավորման աղբյուրները

2.1 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Ընկերության փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ 2014 թվականի ընթացքում իրականացվել են 8 711,9 մլն դրամի ներդրումներ (ավարտված և անավարտ աշխատանքների գումարային արժեք): Նշված ծավալում Ընկերությունը ներառել է նաև 86,1 մլն դրամի անհետաձգելի աշխատանքների և 23,1 մլն դրամի անհատույց ստացված հիմնական միջոցների արժեքը: Բացի վերը նշվածը հաշվետվությունը ներառում է նաև ներդրումային ծրագրով չնախատեսված 734,0 մլն դրամի աշխատանքներ: Նշված ծավալում 615,6 մլն դրամի ներդրումները հանդիսանում են սակագնի ծախսային հոդվածների տարրեր: Եվս 115,5 մլն դրամի ներդրումներ ներառվել են Ընկերության 2015 թվականի ներդրումային ծրագրում և դրանց փոխհատուցման հարցը կքննարկվի 2015 թվականի ներդրումային գործունեության վերլուծության ընթացքում:

Հաշվի առնելով վերը նշվածը, Ընկերության կողմից 2014 թվականի համար հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների համադրելի ծավալը կազմել է 7 847,3 մլն դրամ, ինչ էլ դիտարկվել է Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշների վերլուծության ընթացքում: Նշված ծավալից շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքը կազմել է 7 142,3 մլն դրամ, իսկ մնացած 705,0 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ինչ վերաբերում է անհետաձգելի աշխատանքների իրականացմանն ուղղված ներդրումներին, ապա դրանց փոխհատուցման հարցը դիտարկվել է առանձին՝ սակագնային մարժայով փոխատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման ընթացքում:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2014 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը		2014 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրում-ային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	1 850.0	20.7%	1 387.7	19.4%	75.0%
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	6 205.0	69.4%	5 153.4	72.2%	83.1%
3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	226.6	2.5%	293.5	4.1%	129.5%
4	Գրասենյակային գույքի ձեռքբերում	39.8	0.4%	40.3	0.6%	101.3%
5	Համակարգչային տեխնիկայի և աքսեսուարների ձեռքբերում	416.0	4.7%	174.9	2.4%	42.0%
6	Շշահագործվող ավտոտրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում	49.1	0.5%	35.5	0.5%	72.3%
7	Վարչական շենքերի և շինությունների վերակառուցում	20.0	0.2%	18.9	0.3%	94.4%
8	Ուսումնական վարժադաշտի կառուցում	110.0	1.2%	38.2	0.5%	34.7%
9	Դիզելային գեներատորի ձեռքբերում ևտեղադրում ընկերության գլխավոր մասնաշենքում	20.0	0.2%	-	0.0%	0.0%
10	**Ընդամենը**	**8 936.5**	**100%**	**7 142.3**	**100%**	**79.9%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից, Ներդրումային ծրագիրն Ընկերությունը կատարել է 79,9%-ով: Ինչպես և նախատեսված էր ներդրումային ծրագրով ներդրումների զգալի մասը՝ 72,2% ուղղվել է նոր սպառողների միացմանը և բաշխիչ ցանցերի ընդլայնման նպատակով հատուկ ծրագրերի իրականացմանը: Ուղղությունը կատարվել է 83,1%-ով:

2.2 Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև ներկայացված է 2014 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումների (անավարտ և ավարտված) ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Ավարտված և անավարտ աշխատանքների արժեքը		Ավարտված աշխատանքների արժեքը	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	1 657.8	21.1%	1 657.8	23.2%
2	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	2 406.6	30.7%	2 042.6	28.6%
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	203.6	2.6%	203.6	2.9%
4	Ոչ նյութական ակտիվներ	114.8	1.5%	114.8	1.6%
5	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում՝	3 464.5	44.1%	3 123.4	43.7%
5.1	*աշխատանքի վճարման գծով ծախսումներ*	*263.3*	*3.4%*	*260.3*	*3.6%*
5.2	*Նյութական ծախսումներ*	*1 585.5*	*20.2%*	*1 480.8*	*20.7%*
5.3	*տեղակայման ենթակա ծախսումներ*	*1 190.5*	*15.2%*	*1 138.6*	*15.9%*
5.4	*նախագծեր*	*343.1*	*4.4%*	*166.5*	*2.3%*
5.5	*այլ ծախսումներ*	*82.0*	*1.0%*	*77.2*	*1.1%*
6	**Ընդամենը**	**7 847.3**	**100%**	**7 142.3**	**100%**

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, շահագործման հանձնված հիմնական միջոցների 23,2%-ը նախորդ ժամանակաշրջանի անավարտ աշխատանքներն են: Հարկ է նշել, որ նախորդ տարվա վերջում այս տոկոսադրույքը կազմել էր ընդամենը 5,8%, որի արդյունքում Ընկերության անավարտ ակտիվների ընդհանուր արժեքը աճել էր մոտ 2,0 մլրդ դրամով՝ հասնելով գրեթե 5,0 միլիարդ դրամի: Մյուս հատկանշական փաստը դա սեփական ուժերով և կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների հարաբերակցության փոփոխությունն է ի օգուտ սեփական ուժերով կատարվող

աշխատանքների: Մասնավորապես 2013 թվականի ընթացքում սեփական ուժերով իրականացված աշխատանքների արժեքը կազմել էր ընդհանուրի մոտ 36%-ը (2014 թվականին՝ 44%), իսկ կապալառու կազմակերպություններինը՝ 51%-ը (2014 թվականին՝ 31%):

ԲԱԺԻՆ 3.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

3.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 1 850,0 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման և վերակառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցերի բարեկարգման նպատակով: Փաստացի իրականացվել են 1 401,5 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 1 387,7 մլն դրամի հիմնական միջոցներ:

Ընկերության էլեկտրամատակարարման հուսալիության ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էլեկտրական ցանցերում անջատումները հիմնականում բաժին են ընկնում 0,4-6(10) կՎ լարման ցանցերին: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ 2014 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումների 90,1%-ը նախատեսվել էր իրականացնել 0,4-6(10) կՎ լարման բաշխիչ ցանցերում, որտեղ 2014 թվականին իրականացված ներդրումներից շահագործման են հանձնվել 974,9 մլն դրամի հիմնական միջոցներ, որը կազմում է այս ուղղությամբ իրականացված ընդհանուր ներդրումների 70,3%-ը:

Սպասարկման որակի ցուցանիշների բարելավման ուղղությամբ Ընկերության 2014 թվականի ներդրումային գործունեության արդյունքները գնահատելու նպատակով համեմատվել է 0,4-6(10) կՎ լարման ցանցերում 2013-2014 թվականների ընթացքում գրանցված հրաժարումների քանակը [Տեղեկատվություն 5]: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ եթե 2013 թվականի ընթացքում գրանցվել է 4 556 հրաժարում, ապա 2014 թվականին հրաժարումների թիվը նվազել է 13,1%-ով և կազմել է 3 960: Նվազել է նաև ընդհանուր համակարգի (լարման բոլոր մակարդակներում) հրաժարումների թիվը նույնպես՝ 4 973 հրաժարումից կազմելով 4429 կամ 11%-ով: Հարկ է սակայն նշել, որ այս կրճատումը չի բերել

հոսանքազրկումների միջին հաճախության (հոսանքազրկում/բաժանորդ) կրճատմանը: Կարելի է ենթադրել, որ 2014 թվականի ընթացքում մեկ հրաժարման հետևանքով հոսանքազրկվել են ավելի մեծ թվով բաժանորդներ քան 2013 թվականին: Բացի վերը նշվածը վատթարացել է նաև վթարների վերականգնման տևողության ցուցանիշը՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 28 րոպե/բաժանորդով կամ 13%-ով: Հոսանքազրկումների միջին տևողության և հաճախականության ցուցանիշների պահպանման, անվտանգության ապահովման և մաշված սարքավորումների փոխարինման ուղղությամբ նախատեսված էր նաև 200,0 մլն դրամի ներդրումներ իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրական ցանցի բարեկարգման նպատակով: Ներդրումներն իրականացվել են 198,2 մլն դրամ ծավալով, որի արդյունքում Երևան քաղաքի 133 շենքերում բարեկարգվել են 347 մուտքեր:

Եվս 100,0 մլն դրամ նախատեսված էր այլ անձանց պատկանող բաշխիչ ցանցերի ձեռքբերման համար: Այս ենթաուղղությամբ ձեռք են բերվել 81,0 մլն դրամի հիմնական միջոցներ:

Բացի վերը նշվածը այս ուղղությամբ բնակիչների դիմումների և Ընկերության ուսումնասիրությունների հիման վրա նախատեսվել էին նաև թվով 8 հասցեական աշխատանքներ, որոնցից իրականացվել է միայն մեկը՝ Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասում՝ 7,8 մլն դրամ ծավալով:

Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ նախատեսված թվով 8 հասցեական աշխատանքներից նույնպես իրականացվել է ընդհամենը մեկ հասցեական աշխատանք՝ ևս Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասում՝ 14,5 մլն դրամ ծավալով:

3.2 Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում

3.2.1 Նոր սպառողների միացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ 2014 թվականին նախատեսվում էր ներդնել 2 900,6 մլն դրամ: Իրականցվել է 5 576,4 մլն դրամի ներդրումներ, որից փաստացի շահագործման են հանձնվել 4 918,3 մլն դրամի հիմնական միջոցներ: Արդյունքում՝ 2014 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 4285 նոր բաժանորդներ: Այս ծավալում 880,9 մլն դրամի ներդրումները դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեությանը քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել:

Հարկ է նաև նշել, որ ցանցին միացված նոր բաժանորդների մասով ընկերության կողմից գանձվել են 1 429,9 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

3.2.2 Հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2014 թվականին նախատեսված էր ներդնել 3 304,4 մլն դրամ՝ «Ծաղկաձոր» 35/10 կՎ ենթակայանի կառուցման և «Պուրակ» 35/6 կՎ, «Դիլիջան» 35/10 կՎ և ԵրՀԷԿ-10 կՎ բաշխիչ ենթակայանների վերակառուցման նպատակով: Փաստացի ներդրումներ են իրականացվել միայն «Դիլիջան» 35/10 կՎ և ԵրՀԷԿ-10 կՎ բաշխիչ ենթակայանների վերակառուցման ուղղությամբ և շահագործման հանձնված ներդրումների ծավալը կազմել է համապատասխանաբար՝ 114,8 և 120,3 մլն դրամ:

3.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 226,6 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման

համակարգը (տեղադրվեին և փոխարինվեին տեղեկատվության ավտոմատ փոխանցման սարքավորումներ:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 293,5 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 242,7 մլն դրամ, որից 112,1 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման նպատակով,
- 110-6(10) կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 50,8 մլն դրամ:

Այս ուղղությամբ ներդրումային ծրագիրը գերազանցվել է, քանի որ հաշվիչների փոխարինման ուղղությամբ իրականացված ներդրումներից 115,6 մլն դրամը ուղղվել է կանխավճարային սկզբունքով տեղադրված միաֆազ և եռաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների ձեռքբերմանը:

3.4 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 39,8 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի ձեռք են բերվել 40,3 մլն դրամի ապրանքներ,
- համակարգչային տեխնիկայի, ծրագրերի (ERP) և համալրող սարքավորումների ձեռքբերում՝ 416,0 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 60,1 մլն դրամի համակարգիչներ, մոնիթորներ, անխափան սնուցման և այլ համալրող սարքավորումներ, ևս 114,8 մլն դրամ ուղղվել է ERP համակարգի ներդրմանը,
- շահագործումից հանված տրանսպորտային միջոցների ամբողջական վերականգնում՝ ընդհանուր 49,1 մլն դրամ արժեքով: Փաստացի 35,5 մլն դրամ ներդրվել է 17 բեռնատար մեքենա-մեխանիզմների և հատուկ տեխնիկաների ամբողջական վերականգնման ուղղությամբ,

- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 20,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2014 թվականի ընթացքում ներդրվել է 18,9 մլն դրամ,
- Ուսումնական վարժադաշտի կառուցում՝ 110,0 մլն դրամ արժեքով: Ներդրումների փաստացի ծավալը կազմել է 38,2 մլն դրամ,
- Դիզելային գեներատորի ձեռքբերում և տեղադրում Ընկերության գլխավոր մասնաշենքում՝ 20,0 մլն դրամ: Այս ուղղությամբ որևէ ներդրում չի իրականացվել:

ԲԱԺԻՆ 4.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի իրականացված գնումների մոնիթորինգի արդյունքները

4.1 Ապրանքների շուկայական գների մոնիթորինգ

Ընկերության կողմից ձեռք բերված ապրանքների շուկայական գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ սարքավորումների ձեռք բերման գները միջինում 33%-ով գերազանցում են շուկայականը: Նման գերազանցումները, մեր կարծիքով, հետևանք են մի շարք գործոնների՝ մասնավորապես.

ա) ապրանքները ձեռք են բերվում ոչ թե արտադրող կազմակերպություններից, կամ նրանց ներկայացուցիչներից, ինչն ավելի տրամաբանական կլիներ ձեռք բերվող ապրանքների քանակի և արժեքի պարագայում, այլ տեղական միջնորդ կազմակերպություններից: Արդյունքում նշված կազմակերպությունները ապրանքի ինքնարժեքին ավելացնում են նաև իրենց ծախսերը և շահույթը, ինչն էլ բացասական է ազդում արդեն իսկ Ընկերության կողմից ձեռք բերվող ապրանքների գների վրա,

բ) մատակարարված ապրանքների դիմաց Ընկերությունը վճարումները կատարում է 90 բանկային օրվա ընթացքում, ինչը մատակարարների մոտ առաջացնում է կապիտալի ներգրավման լրացուցիչ ծախսեր: Սա ևս ապրանքների գների թանկացմանը հանգեցնող լրացուցիչ գործոն է: Եթե տեղական շուկայում առկա կարճաժամկետ վարկերի միջին տարեկան տոկոսադրույքն ընդունենք 18-20%, ապա միայն այս գործոնի կշիռը կկազմի 6-7%,

գ) միջնորդ կազմակերպությունների կարողությունները արտաքին շուկաների ուսումնասիրության և այդ շուկաներում ներկայանալու ներուժի առումով անհամեմատ սահմանափակ են քան Ընկերությանը, ինչը ևս իր ազդեցությունն է ունենում ապրանքների ձեռքբերման գների և արտադրողների ընտրության հարցում,

դ) որոշ սարքավորումների ձեռքբերման մրցույթները հայտարարվել են դրանց տեղակայման աշխատանքների հետ միասին, որը լրացուցիչ արգելք է հանդիսացել արտադրող ընկերությունների համար մրցույթներին մասնակցելու առումով և անհիմն խոչընդոտել մրցակցային միջավայրի ձևավորմանը,

ե) որոշ սարքավորումների ձեռքբերման մրցույթները հայտարարվել են առանց գների վրա էական ազդեցություն ունեցող հարաչափերի, որի արդյունքում ներկայացվել են միմյանցից էականորեն տարբերվող առաջարկներ: Նշված հարաչափերի ճշգրտման արդյունքում փոփոխվել են գնային առաջարկները և չեղյալ են հայտարարվել մրցույթները,

զ) Ընկերությունը մինչև գնման հայտարարության հրապարակումը չի իրականացրել շուկայի ուսումնասիրություն՝ պահանջվող ապրանքի բոլոր հնարավոր խոշոր մատակարարներին հայտնաբերելու, նրանց առաջարկությունների որակի մասին հաճախորդների կարծիքներն ուսումնասիրելու, գնային տիրույթի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և վերջին հաշվով գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ճիշտ ընտրություն կատարելու նպատակով,

է) Ընկերության կողմից գնումների պատշաճ պլանավորում չի իրականացվում: Մրցույթային եղանակով ձեռք բերված գնումներից բացի Ընկերությունը նույն ապրանքները ձեռք է բերում նաև ուղղակի գնումների միջոցով: Մասնավորապես 2014 թվականի ընթացքում ընկերությունը ձեռք է բերել 25 670 հատ ավտոմատ անջատիչներ, որից միայն 6315 հատը մրցույթի միջոցով: Հարկ է նշել նաև, որ 3388 ավտոմատ անջատիչների ուղղակի գնումը իրականացվել է մրցույթի միջոցով ձեռք բերված աավտոմատ անջատիչների մատակարարումից հետո (մատակարարումն իրականացվել է 02.12.2014 թ.) մեկ ամսվա ընթացքում՝ այդ թվում 2160 անջատիչը մատակարարվել է մեկ կազմակերպության կողմից մեկ գործարքով՝ հիմնական խմբաքանակի մատակարարումից երկու օր հետո:

4.2 Աշխատանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգ

Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ դրանց գները միջինում 16,2%-ով գերազանցում են շուկայականը: Հարկ է նշել, որ մալուխային անցուղիների կառուցման աշխատանքների ուսումնասիրության արդյունքները տարանջատվել են ընդհանուր կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների վերլուծությունից, քանի որ վերջինիս կողմից իրականացված ակտերի ուսումնասիրության ընթացքում շուկայական գների

գերազանցումը կազմել է ավելի քան 56%: Նշված գերազանցումները հետևանք են մի շարք գործոնների՝ մասնավորապես.

ա) Ընկերության կողմից ոչ միշտ են կապալառուին տրամադրվում աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերը և սարքավորումները, որի արդյունքում դրանց արժեքի նկատմամբ կապալառուները կիրառում են վերադիր ծախսեր և շահույթ, ինչը կապալառուների տեսանկյունից բնական է: Սակայն այդ նյութերն ու սարքավորումներն Ընկերության կողմից տրամադրելու դեպքում դրանց նկատմամբ կապալառուների կողմից վերադիր ծախսերի և շահույթի լրացուցիչ տոկոսներ չէին հաշվարկվի,

բ) կապալառուների կողմից այդ աշխատանքների իրականացման նպատակով մանրածախ շուկայից ձեռքբերվող ապրանքների գները բարձր են Ընկերության կողմից կենտրոնացված կարգով կատարվող գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների գներից: Մասնավորապես՝ կապալառուների կողմից հաղորդալարերի և մալուխների ձեռքբերման գները մոտ 35%-ով գերազանցում են դրանց շուկայական գները:

Նախագծման աշխատանքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ներկայումս նախագծող կազմակերպությունների ծառայության արժեքը հաշվարկվում է ելնելով նախահաշվային արժեքից: Այսինքն, նախագծող կազմակերպության ծառայության արժեքը ուղիղ համեմատական է նախահաշվի արժեքին: Նշված հանգամանքը կարող է դրդապատճառ հանդիսանալ նախագծող կազմակերպությունների կողմից՝ իրենց եկամուտները մեծացնելու նպատակով, աշխատանքների նախահաշվային արժեքների անհիմն ուռճացման: Այս ենթադրությունը հավաստում է նաև Ընկերության ներկայացրած տեղեկատվության [Տեղեկատվություն 1] ուսումնասիրությամբ՝ համաձայն որի նախահաշիվները միջինում մոտ 35%-ով գերազանցում են փաստացի աշխատանքների արժեքը: Եթե ընդունենք, որ շինարարությունը կատարվում է գործող նորմերին համապատասխան ապա այս հանգամանքը ևս թույլ է տալիս ենթադրել, որ աշխատանքների նախահաշվային արժեքները ուռճացվել են, որի արդյունքում

Ընկերությունը 35%-ով ավել վճարում է կատարել նախագծող կազմակերպություններին:

Ընկերությունը 2014 թվականի ընթացքում նախագծող կազմակերպություններին վճարել է 343,1 մլն դրամ, որից լիցենզավորված գործունեությանը մասնակցում են 125,7 մլն դրամի աշխատանքները: Նշված ծախսերի 35%-ը, որը կազմում է 32,6 մլն դրամ կնվազեցվի սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հարկ է նշել նաև, որ Ընկերությունը համաձայն իր ներքին կանոնակարգի նախագծող կազմակերպությունների ընտրությունը պետք է իրականացներ մրցութային եղանակով՝ մրցույթի չափանիշ սահմանելով կատարման ժամկետը: Նշված եղանակը ենթադրում էր նախագծման աշխատանքների կատարման ժամկետների հնարավորինս կրճատում, որն էլ նպատակաուղղված էր նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ժամկետների կրճատմանը և Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային աղյուսակում Հայաստանի Հանրապետության դիրքի բարելավմանը: Սակայն համաձայն Ընկերության սույն թվականի հունիսի 3-ի №04-ԵԲ-02/2001 գրության՝ մեկ նախագծող կազմակերպության հետ կնքվել է գլխավոր կապալի պայմանագիր՝ արդյունքում ստեղծելով մենաշնորհ, ինչպես գների սահմանման, այնպես էլ ժամկետների առումով: Այս առնչությամբ Ընկերության գործելաոճը ընդհանրապես հասկանալի չէ: Հանձնաժողովը բազմիցս նախազգուշացրել է տարբեր գործառույթներում (սարքավորումների ձեռքբերում, կապալառու կազմակերպությունների կողմից աշխատանքների իրականացում) Ընկերության գործունեության անարդյունավետության վերաբերյալ, սակայն Ընկերությունը նշված թերությունները շտկելու փոխարեն վերացնում է այն չնչին դրական փոփոխությունները, որոնք ձեռք են բերվել կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ԲԱԺԻՆ 5.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետագա սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

5.1 Ներդրումային ծրագրի շրջանակում իրականացված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2014 թվականի ընթացքում փաստացի ավարտված 7 228,4 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա չեն՝ մասնավորապես.

1. նոր սպառողների միացման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել է 1 577,28 մլն դրամ հետևյալ պատճառներով՝

   ա) հաշվետվությունում ներառված են աշխատանքներ, որոնք չնայած այն հանգամանքին, որ հանձնված են շահագործման, դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել: Ուստի այս ծախսերի կապիտալացումը հասկանալի չէ: Նշված ներդրումների Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի համապատասխան բաժանորդներին էլեկտրական ցանցին միացնելուց և նրանց հետ էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելուց հետո,

   բ) շահագործման հանձնված ակտիվների մի մասը վերաբերում է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը էլեկտրական ցանցին միացված բաժանորդներին, որը նույնպես հասկանալի չէ: Այսինքն չնայած այն հանգամանքին, որ բաժանորդի սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման աշխատանքներն ամբողջությամբ ավարտված են (ենթադրաբար ստորագրվել են տարբեր տիպի ավարտական փաստաթղթեր) և բաժանորդի հետ կնքվել է մատակարարման պայմանագիր, սակայն ստեղծված ակտիվները շահագործման չեն հանձնվում: Խոսքը ոչ միայն վերաբերում է տարեվերջին իրականացված աշխատանքներին, որոնց ձևակերպումները տեխնիկական պատճառներով կարող են անցնել հաջորդ տարի, այլ նույնիսկ

2012 թվականին միացված բաժանորդներին, որոնց հաշվապահական ձևակերպումների համար պահանջվել է ավելի քան երկու տարի: Հաշվի առնելով, որ նախորդ տարիների ընթացքում նոր սպառողների էլեկտրական ցանցին միացման ուղղությամբ իրականացված ներդրումները սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել են ելնելով դրանց էլեկտրական ցանցին միացված լինելու փաստից (շահագործման հանձնման փաստը հաշվի չի առնվել, քանի որ նոր սպառողների էլեկտրական ցանցին միացման վերաբերյալ հաշվետվությունը նման տեղեկատվություն չի ներառում), ուստի դրանք արդեն իսկ ներառված են սակագնային մարժայի հաշվարկում,

գ) որոշ բաժանորդների սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվել է առանց համապատասխան միացման վճարի գանձման: Նշված հանգամանքը նույնպես ընդունելի չէ,

2. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ՇՉՕ, ՅԱՌՎ, ՌԼՆԴ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ԿՍՕ, ԼՏԵ և ՏՄ) մասով իրականացված ներդրումներից շուկայական գների մոնիթորինգի արդյունքում նվազեցվել է 205,46 մլն դրամ (Բաժին 4.1),
3. տեղակայված էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների ձեռքբերման գների մոնիթորինգի արդյունքում փաստացի կատարված 286,36 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 19,53 մլն դրամ, (Բաժին 4.1) Եվս 1,05 մլն դրամ նվազեցվել է ձեռք բերված բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներին ներկայացվող՝ ՀՀ էներգետիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 22-ի հրամանի 6.9 կետի, տեխնիկական պահանջները չբավարարելու պատճառով,
4. Ընկերության կողմից իրականացված գնումների առանձին գործարքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԻԿՖ տիպի ավտոմատ անջատիչները և փայտյա հենասյուները ևս ձեռք են բերվել շուկայականից բարձր գներով, որի պատճառով ձեռքբերված 40,04 մլն դրամի անջատիչներից նվազեցվել է 13,60 մլն դրամ, իսկ 60,39 մլն դրամի փայտյա հենասյուներից՝ 11,08 մլն դրամ (Բաժին 4.1),

5. տեղակայված հաշվիչների արկղերի շուկայական գների ուսումնասիրության և ընկերության ձեռքբերման գների համադրության արդյունքում՝ կատարված 104,67 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 3,06 մլն դրամ: (Բաժին 4.1),
6. կապալառու կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքի շուկայական գների գերազանցման պատճառով ներդրումների ծավալից նվազեցվել է 296,18 մլն դրամ (Բաժին 4.2),
7. Նախագծային աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքից նվազեցվել է 32,60 մլն դրամ,
8. աշխատանքի վճարման գծով իրականացված ծախսումներից 262,67 մլն դրամը նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ Ընկերության աշխատակիցների աշխատավարձերն արդեն իսկ ամբողջությամբ ներառված են սակագնային մարժայի ծախսերի հատվածում,
9. Ընկերության լիցենզավորված գործունեությանը չմասնակցող ներդրումներ 4,90 մլն դրամ ընդհանուր ծավալով՝ մասնավորապես.

   ա) 110-6(10) կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով իրականացված ներդրումներից նվազեցվել է 4,80 մլն դրամ, քանի որ համաձայն հաշվապահական ձևակերպումների դրանք շահագործման մեջ չեն գտնվում,

   գ) 0,10 մլն դրամ ընդհանուր արժեքով նախագծման աշխատանքներից նվազեցումներ, քանի որ դրանց հետ կապված աշխատանքներ չեն իրականացվել:

   Նշված ներդրումները Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի դրանք լիցենզավորված գործունեության մեջ ներգրավվելուց հետո,

10. սպասարկման որակի բարելավման ուղղությամբ կատարված 6(10)-0,4 կՎ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման աշխատանքներում ներառվել են աշխատանքներ, որոնք համաձայն Ընկերության 2012

թվականի հունվարի 20-ի 04ՎՍ-05/182 գրությամբ ներկայացված 6(10)-0,4 կՎ լարման օդային և մալուխային գծերի կապիտալ ծախսերի ճանաչման հայտանիշների՝ պետք է ձևակերպվեին որպես ընթացիկ ծախսեր: Դրանք են մալուխային գծերի մինչև 50մ հատվածի փոխարինման աշխատանքները, իսկ օդային գծերի համար՝ մինչև 200 մ երկարությամբ գծի նորոգման կամ մինչև 5 հենասյան փոխարինման աշխատանքները: Այս ուղղությամբ նվազեցվող ներդրումները կազմել են 8,03 մլն դրամ.

11. նոր սպառողների միացման նպատակով գանձված միացման վճարները՝ 1 429,93 մլն դրամ արժեքով ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Բացի վերը նշվածը, իրականացվել է նաև Հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է շուրջ 846,41 մլն դրամով, հետևյալ ենթաուղղություններով.

- 35 կՎ լարման օդային գծերի վերակառուցում՝ 9,25 մլն դրամ,
- 110 կՎ լարման օդային գծերի վերակառուցում՝ 295,78 մլն դրամ,
- Նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված ներդրումներ՝ 440,39 մլն դրամ,
- Կանխավճարային սկզբունքով տեղադրված հաշվիչներ՝ 100,49 մլն դրամ
- գրասենյակային գույքի ձեռքբերում՝ 0,50 մլն դրամ:

Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներից սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցվել են 35-110 կՎ լարման օդային գծերի վերակառուցմանն և գրասենյակային գույքի ձեռքբերմանն ուղված ներդրումները՝ 305,53 մլն դրամ ծավալով: Մնացած ներդրումները ենթակա են ներառման սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում՝ քանի որ դրանց ծավալները

պայմանավորված են ստացված դիմումների քանակով, որոնք հնարավոր չէ ճշգրիտ կանխատեսել:

5.2 Անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

Ընկերության կողմից 2014 թվականի ընթացքում անհետաձգելի աշխատանքների իրականացման նպատակով կատարված 86,14 մլն դրամի շրջանակներում շահագործման են հանձնվել թվով 472 աշխատանքներ: Այս աշխատանքներից՝ 19,45 մլն դրամի աշխատանքները հանդիսանում են սակագնային մարժայի ծախսային հոդվածներ (Բաժին 5.1.10) և նվազեցվել են սկագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից: Անհետաձգելի աշխատանքների ընդունելի մասից 5,93 մլն դրամ նվազեցվել է որպես աշխատանքի վճարման գծով իրականացված ծախսումներ (Բաժին 5.1.2), 5,40 մլն դրամը նվազեցվել է սարքավորումների արժեքից (Բաժին 4.1), իսկ 3,14 մլն դրամը որպես կապալառուների կողմից իրակականացված աշխատանքների արժեքից (Բաժին 4.2):

Արդյունքում՝ ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված անհետաձգելի աշխատանքներից միայն 52,22 մլն դրամի ներդրումներն են ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

5.3 Լուծարված և օտարված հիմնական միջոցներից նվազեցումներ

Համաձայն հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունների Ընկերությունը 2014 թվականի ընթացքում օտարել է 25,42 մլն դրամի հիմնական միոցներ, որոնք նվազեցվել են ներդրումների ծավալից: Բացի վերը նշվածը Ընկերությունը 2014 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներում ներառել է լուծարված հիմնական միջոցներից ստացված հետագա օգտագործման համար պիտանի նյութեր՝ 52,80 մլն դրամ արժեքով, որից 41,66 մլն դրամի նյութեր և այլ պիտանի դետալներ ընդգրկվել են կապիտալացվող աշխատանքներում:

Այս առնչությամբ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ընկերությունը յուրաքանչյուր տարի լուծարում է բազմաթիվ հիմնական միջոցներ, որի արդյունքում ստացված պիտանի նյութերի արժեքը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի: Մասնավորապես 2014 թվականի ընթացքում Ընկերությունը լուծարել է 350 ուժային տրանսֆորմատոր, որոնցից ստացված պիտանի նյութերի արժեքը կազմել է ընդամենը 5,52 մլն դրամ: Այս ծավալում 110ԿՎ լարման տրանսֆորմատորից ստացված օգտակար նյութերի գինը կազմել է 316,88 հազար դրամ, 35 ԿՎ լարման տրանսֆորմատորինը՝ 51,50 հազար դրամ, իսկ 196 ուժային տրանսֆորմատորներից ընդհանրապես օգտակար նյութեր չեն ստացվել: Եվս 287 օդային գծերի լուծարումից ստացված օգտակար նյութերի արժեքը կազմել է 4,30 մլն դրամ: Հարկ է նշել, որ, նույնիսկ նշված հիմնական միջոցների (օդային գծեր, տրանսֆորմատորներ և այլն) առկա մետաղյա ջարդոնի իրացման գինը զգալի գերազանցում է դրանցից ստացված նյութերի արժեքը, իսկ օրինակ ավելի քան 100 կգ գունավոր մետաղ պարունակող տրանսֆորմատորների զրոյական արժեքով լուծարումը ընդհանրապես հասկանալի չէ: Ուսումնասիրության կարիք ունի նաև լուծարված հիմնական միջոցների հետագա շահագործման աննպատակահարմարության հիմնավորումները: Մասնավորապես լուծարված հիմնական միջոցների ցանկը ներառում է 2005 թվականից հետո ձեռք բերված տրանսֆորմատորներ, որոնց ծառայության ժամկետը գնահատվում է առնվազն 15-20 տարի: Հարկ է նշել նաև, որ էլեկտրական ցանցերում, որոշ տրանսֆորմատորներ շահագործվում են ավելի քան 50 տարի:

5.4 Այլ անձանց միջոցներով ստեղծված հիմնական միջոցների արժեքներից նվազեցումներ

Համաձայն Ընկերության կողմից ներկայացված հաշվետվության 23,08 մլն դրամի ներդրումներ 2014 թվականի ընթացքում ստացվել է անհատույց: Այս ներդրումները ևս կնվազեցվեն սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

5.5 Սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 3-ում ներկայացված է Ընկերության կողմից 2014 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 5
(մլն դրամ)

1	2014 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը	**7 954.71**
2	2014 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը	**7 228.43**
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում՝	**4 280.51**
3.1	Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	**2 760.42**
3.1.1	Նոր սպառողների էլեկտրատեղակայանքները ցանցին միացնելուն ուղղված ներդրումներից	**1 577.28**
3.1.1.1*	*Չմիացված բաժանորդների ուղղությամբ իրականացված ներդրումներ*	***880.94***
3.1.1.2	*Նախորդ ժամանակահատվածում միացված բաժանորդների ուղղությամբ իրականացված և փոխհատուցված ներդրումներ*	***663.23***
3.1.1.3	*Առանց համապատասխան միացման վճարի գանձման իրականացված ներդրումներ*	***33.11***
3.1.2	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	**582.56**
3.1.2.1	*Տեղակայման ենթակա սարքավորումների և ապրանքների արժեքից (շուկայական գները գերազանցելու պատճառով)*	***253.78***
3.1.2.2	*Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքների արժեքից*	***296.18***
3.1.2.3	*Նախագծային աշխատանքներ իրականացնող ընկերությունների կողմից մատուցված ծառայությունների արժեքից*	***32.60***
3.1.3	Սակագնով փոխհատուցված աշխատանքի վճարման գծով ծախսումներից	**262.67**

3.1.4*	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող ներդրումներ	**4.90**
3.1.4.1	*Էլեկտրական էներգիայի հաշվառման համակարգի ավտոմատացման ուղղությամբ իրականացված ներդրումներից*	***4.80***
3.1.4.2	*Նախագծման աշխատանքներից*	***0.10***
3.1.5	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,5 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	**8.03**
3.1.6**	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	**305.53**
3.1.7	Անհետաձգելի աշխատանքներից նվազեցված ներդրումներ	**19.45**
3.2	Լուծարված և օտարված հիմնական միջոցներ	**67.08**
3.3	Այլ անձանց միջոցներով ստեղծված հիմնական միջոցներ	**23.08**
3.4	Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ	**1 429.93**
4	**2014 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**2 947.92**

* Լիցենզավորված գործունեությանը մասնակցելու համապատասխան հիմնավորումներ ներկայացնելու դեպքում իրականացված աշխատանքները կներառվեն սակագնային մարժայով փոխհատուցվող ներդրումների ծավալում.

** Իրականացված ներդրումները ենթակա են ներառման 2015 թվականի սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընկերության 2014 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 79,92%-ով: Սպառողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ ներդրումների իրականացման ցուցանիշը կազմել է 75,01%: Հարկ է նշել, որ Ընկերության կողմից հերթական անգամ պատշաճ մոտեցում չի ցուցաբերվել ներդրումների առաջնահերթության հարցում: Մասնավորապես ներդրումային ծրագրի N1 և N2 հավելվածներով նախատեսված 61 հասցեական աշխատանքներից իրականացվել են ընդամենը 2-ը՝ Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասում:
2. Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների համաձայն, վերջինիս անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեքը 2014 թվականի սկզբին կազմել է 4 949,9 մլն դրամ: Տարվա ընթացքում այն նվազել է 1 308,0 մլն դրամով՝ տարեվերջին կազմելով 3 641,9 մլն դրամ, կամ շահագործման հանձնված հիմնական միջոցների արժեքի (7 228,4 մլն դրամ) շուրջ 50,4%-ը: Չնայած այն հանգամանքին, որ նշված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների ծավալը զգալի նվազել է նախորդ տարվա համեմատությամբ, անհրաժեշտ է հետևողականորեն շարունակել նշված ակտիվների ավարտման և շահագործման հանձնման գործընթացը, որը կապահովի դրանց ստեղծման նպատակով իրականացված արդյունավետ ներդրումների ներառումը սակագնային մարժայի հաշվարկում:
3. 2014 թվականի ընթացքում 0,4 և 6(10) կՎ լարման ցանցերում հրաժարումների քանակը 2013 թվականի հետ համեմատ նվազել է 13,1%-ով: Միևնույն ժամանակ 1 բաժանորդի հաշվով հրաժարումների միջին հաճախությունը վատթարացել է մոտ 10%-ով՝ կազմելով 3,08 հոսանքազրկում բաժանորդ: Նշվածից հետևում է, որ 2014 թվականին տեղի ունեցած հրաժարումները բերել են ավելի մեծ քանակով բաժանորդների հոսանքազրկման: Բացի վերը նշվածը վատթարացել է նաև վթարների վերականգնման տևողության ցուցանիշը՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 28 րոպե/բաժանորդով (13%): Ուստի ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ չնայած վթարների բացարձակ արժեքի նվազմանը դրանք եղել են ավելի խոշոր՝ հոսանքազրկելով ավելի մեծ քանակությամբ բաժանորդների:

4. 2014 թվականի ընթացքում Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացվող բաժանորդների մոտ թույլատրելի սահմաններից լարման շեղման դեպքերի քանակի և տևողության մասին տեղեկատվությունը համարվել է ոչ արժանահավատ՝ հաշվի առնելով Հանձնաժողովին և Ընկերությանն ուղղված սպառողների բազմաթիվ դիմում-բողոքները՝ լարման շեղումներով մատակարարվող էլեկտրաէներգիայի վերաբերյալ և այն հանգամանքը, որ այս ուղղությամբ 2014 թվականին իրականացվել է ընդամենը մեկ հասցեական աշխատանք:
5. 2014 թվականի ընթացքում էլեկտրական ցանցին են միացվել 4285 նոր սպառողներ: Նոր սպառողների միացման նպատակով 2014 թվականին փաստացի շահագործման են հանձնվել 4 918,3 մլն դրամի հիմնական միջոցներ: Սակայն հարկ է նշել, որ այս ծավալում 880,9 մլն դրամի հիմնական միջոցները դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, քանի որ դրանց իրականացման արդյունքում էլեկտրական ցանցին նոր բաժանորդներ չեն միացել (բաժանորդներին մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ չի ներկայացվել): Այս համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ չնայած Ընկերության կողմից նոր սպառողների միացման ուղղությամբ կատարվող ներդրումների մեծության վերաբերյալ ներկայացվող մտահոգություններին, դրանց արդյունավետությանը պատշաճ ուշադրություն չի դարձվում: Արդյունքում ինչպես և սույն եզրակացության 2-րդ կետում նշված անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվների դեպքում փաստացի իրականացված ներդրումները չեն ներառվում սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:
6. Ընկերության կողմից ձեռք բերված սարքավորումների և աշխատանքների գների մոնիթորինգը ցույց է տալիս, որ գնումների ոչ արդյունավետ կազմակերպման արդյունքում Ընկերության կողմից ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների գները էականորեն գերազանցում են շուկայականը (16,2%՝ ծառայությունների դեպքում, 33%՝ ապրանքների դեպքում), իսկ որոշ դեպքերում դրանք գերազանցում են 50%-ը (ՅԱՌՎ ուժային արկղերի ձեռքբերում, մալուխային անցուղիների կառուցում): Նշվածը հետևանք է

գնումների գործընթացի անարդյունավետ կազմակերպման, և այն խոչընդոտների, որոնց արդյունքում արտաքին շուկաներում Ընկերության պահանջարկին համապատասխան ապրանքներ արտադրող կազմակերպությունները Ընկերության կողմից իրականացվող մրցույթներին հիմնականում չեն մասնակցում: Միևնույն ժամանակ, նյութերի և սարքավորումների մի մասը ձեռք է բերվում ոչ թե Ընկերության, այլ կապալառու կազմակերպությունների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է ապրանքների՝ բարձր գներով ձեռքբերմանը: Որոշ սարքավորումների ձեռքբերման մրցույթները հայտարարվել են առանց գների վրա էական ազդեցություն ունեցող հարաչափերի, որը խոչնդոտել է ընկերություններին մրցույթներին մասնակցելուն և մրցակցային միջավայրի ձևավորմանը:

7. Շահագործման հանձնված հիմնական միջոցներից Ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են 7 228,4 (ներառյալ անհետաձգելի աշխատանքները) մլն դրամի ներդրումներ, որոնցից 2 497,8 (ընդհանուրի 34,6%-ը) մլն դրամի ներդրումները համարվել են ոչ արդյունավետ կամ դեռևս լիցենզավորված գործունեությանը չմասնակցող և չեն ներառվել սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Հարկ է նշել, որ ներդրումների՝ նման ծավալի նվազեցումները կրում են պարբերական բնույթ (2013 թվականին՝ 26,3%), սակայն Ընկերության կողմից գործուն միջոցառումներ չեն ձեռնարկվում Հանձնաժողովի կողմից մատնանշված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ: Արդյունքում, ոչ միայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն զրկվում է իր կողմից իրականացված ներդրումների դիմաց վերադարձ ստանալու հնարավորությունից, այլև այդ գումարները արդյունավետ ծախսելու պարագայում՝ հնարավոր տեխնիկական և տնտեսական այլ օգուտներից: Հարկ է նաև փաստել, որ այդ հանգամանքը նույն պատճառներով իր բացասական ազդեցությունն է ունենում սպառողների սպասարկման որակի վրա և բաշխման համակարգի բնականոն զարգացման վրա: Ուստի կարծում ենք Ընկերությունը նոր ջանքեր պետք է գործադրի իր կառավարման

արդյունավետությունը բարձրացնելու և նման անարդյունավետ ծախսերը բացառելու նպատակով:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի №462Ա որոշումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2014-2016 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Գրություն 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 11-ի №2798Լ գրությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի ճշգրտված ներդրումային ծրագրի վերաբերյալ

Հաշվետվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2015 թվականի մայիսի 6-ի №04-ԵԲ-05/1605 գրությամբ ներկայացված հաշվետվություն

Տեղեկատվություն 1- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման նպատակով իրականացվող ծախսումների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 2- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2014 թվականին նոր սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն

Տեղեկատվություն 3- Սպառողների հոսանքազրկումների քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2014 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 4- Սպառողների մոտ թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության հաշվարկային ցուցանիշների 2014 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)

Տեղեկատվություն 5- Էլեկտրակայանքների հուսալիության փաստացի ցուցանիշների 2014 թվականի տեղեկատվական բազա (http://psrc.am/am/sectors/electric/service-quality-indicators)